



**Ֆինանսական Աջակցության Քաղաքականության Ամփոփագիր**

**Դուք կարող եք Ֆինանսական Աջակցության համար հրավասու լինել:**

Համայնքային բժշկական կենտրոնը (“CMC”) Ֆինանսական Աջակցության Քաղաքականությունն ունի, որի համաձայն այն ֆինանսական աջակցություն (բարեգործական խնամք) է տրամադրում թանկ բժշկական ծախսեր ունեցող իրավասու չապահովագրված բուժառուներին և իրավասու ապահովագրված բուժառուներին:

Դուք կարող եք իրավասու լինել, եթե ապահովագրվու չէք և Ձեր ընտանիքի եկամուտը Ձեր ընտանիքի մեծության համար Դաշնային օրենսդրության համաձայն աղքատության շեմից 450% ցածր է (տե՛ս աղյուսակը), կամ, եթե Դուք ապահովագրված եք և Ձեր ընտանիքի եկամուտը Ձեր ընտանիքի մեծության համար Դաշնային օրենսդրության համաձայն աղքատության շեմից 400% ցածր է, իսկ Դուք բժշկական ծախսեր ունեք, որոնք գերազանցում են Ձեր տարեկան եկամտի 10%-ը: Նույնիսկ եթե Դուք չէք համապատասխանում եկամտի սույն պահանջներին, Դուք դեռևս կարող եք իրավասու լիլ ֆինանսական աջակցության Ձեր հիվանդանոցային վճարումներով:

**Ո՞ր ֆինանսական աջակցությունն է հասանելի:**

Եթե Դուք իրավասու բուժառու եք, Դուք իրավունք ունեք Համայնքային բժշկական կենտրոնում (CMC) շտապ բժշկական օգնության և այլ անհրաժեշտ բժշկական օգնության համար Ձեր բժշկական ծախսերի ամբողջական կամ մասնակի դուրսգրման: Եթե Դուք իրավասու եք Ֆինանսական Աջակցության համար, այդ ծառայությունների համար մենք ձեզ կհից չենք գանձի ավելի գումար, քան սովորաբար գանձվում է ապահովագրված անձանցից:

**Ինչպե՞ս դիմել:**

Մենք խրախուսում ենք մեր բուժառուներին, ովքեր ի վիճակի չեն վճարել իրենց հաշիվը, դիմել օգնության համար: Ֆինանսական Աջակցության Քաղաքականությունը և դիմումի ձևը հասանելի են անվճար մեր կայքէջում՝ (<https://www.communitymedical.org/for-patients-families/billing-and-insurance/Discounts-Charity-Care>), կամ զանգահարելով Բուժառուների Ֆինանսական Ծառայությունների բաժին՝ (559) 459-3939 հեռախոսահամարով: Սույն դիմումի ձևն անվճար հասանելի է նաև Համայնքային բժշկական կենտրոնի (CMC) ընդունելության բաժիններում, որոնք գտնվում են՝

- Community Regional Medical Center (559) 459-6000 2823 Fresno Street, Fresno, CA 93721
- Clovis Community Medical Center (559) 324-4000 2755 Herndon Avenue, Clovis, CA 93611
- Fresno Heart and Surgical Hospital (559) 433-8000 15 E. Audubon Drive, Fresno, CA 93720

Ընտանիքի եկամուտը Դաշնային օրենսդրության համաձայն աղքատության շեմից 450% ցածր է (2022)		
Ընտանիքի մեծությունը	Ամսական	Տարեկան
1	\$5 096	\$61 155
2	\$6 866	\$82 395
3	\$8 636	\$103 635
4	\$10 406	\$124 875
5	\$12 176	\$146 115
6	\$13 946	\$167 355
7	\$15 716	\$188 595
8	\$17 486	\$209 835

Եթե իրավասու լինելու հետ կապված հարցեր ունեք կամ Ձեր դիմումի հետ կապված աջակցության կարիք ունեք, Դուք կարող եք աջակցություն ստանալ զանգահարելով կամ այցելելով ստորև նշված հեռախոսահամարներով և հասցեներով: Ֆինանսական աջակցության վերաբերյալ հավելյալ տեղեկատվության համար կարող եք նաև կապվել Բուժառուների դաշինքի հետ (Health Consumer Alliance) հետևյալ հղումով՝ (<https://healthconsumer.org>): Կան նաև այլ կազմակերպություններ, որոնք կօնեն Ձեզ հասկանալ վճարման գործընթացը: Համայնքային բժշկական կենտրոնի (CMC) ստանդարտ վճարների ցանկին ծանոթանալու համար խնդրում ենք այցելել մեր կայքէջ հետևյալ հղումով՝ ([https://www.communitymedical.org/for-patients-families/billing-insurance/hospital-standard-charges-\(1\)](https://www.communitymedical.org/for-patients-families/billing-insurance/hospital-standard-charges-(1))) և վերջո Համայնքային բժշկական կենտրոնը (CMC) մասնակցում է Հիվանդանոցային Ենթադրյալ Իրավասության (HPE) Ծրագրին: Խնդրում ենք հարցում անել բուժառուների ֆինանսական ծառայությունների բաժին HPE ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար:

Լրացրե՛ք Ֆինանսական Աջակցության դիմումը և ներկայացրե՛ք այն անհրաժեշտ փաստաթղթերով **Community Medical Centers, Patient Financial Services, P.O. Box 1232, Fresno, CA 93715** հասցեով, բուժումը ստանալուց հետո հնարավորինս շուտ: Դիմումները, որոնք ստացվել են դուրսգրման վճարման փաստաթղթից ավելի քան 240 օր անց, կարող են մերժվել:

Սա Ֆինանսական Աջակցության Քաղաքականության ամփոփագիր է: Հատուկ հարցերի համար պետք է հղում կատարեք Քաղաքականությանը:

Ֆինանսական Աջակցության Քաղաքականությունը, դիմումի ձևը և սույն ամփոփագիրը ևս հասանելի են հետևյալ լեզուներով՝ արաբերեն, հայերեն, չինարեն, պարսկերեն, ֆրանսերեն, գերմաներեն, հինդի, հինդի, իտալերեն, ճապոներեն, կորեերեն, լատներեն, Մոն-խմեր (Կամբոջերեն), պորտուգալերեն, փենջաբերեն, ռուսերեն, իսպաներեն, տագալերեն, թայերեն և վիետնամերեն: